



Մաքրությունը սկսվում է աղտոտիչների վնասագերծումից

ՀՀ բնապահպանության նախարարության խորհրդակցությունների դահլիճում տեղի է ունեցել «Ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացում և կայուն օրգանական աղտոտիչներով (ԿՕԱ) աղտոտված տարածքների աղտազերծում՝ քիմիկատների անվտանգ կառավարման միջոցառումների շրջանակներում» ՄԱԶԾ-ԳԷՀ լայնածավալ ծրագրի կառավարման խորհրդի 2017 թվականի առաջին նիստը: Ծրագրի նպատակն է լուծել հանրապետության տարածքում կուտակված ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի կայուն օրգանական աղտոտիչների քիմիական նյութերի, պեստիցիդների էկոլոգիապես անվտանգ հեռացման հիմնախնդիրը՝ դրանք այլ երկիր արտահանելով և ոչնչացնելով: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերջնականապես լուծել Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցի լիկվիդացիայի հարցը: Ծրագրի կառավարման խորհրդի համանախագահ ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը, ներկայացրել



է խորհրդի նորանշանակ անդամներին՝ ՀՀ ԱԻՆ աշխատակազմի փրկարար ծառայության տնօրենի տեղակալ փ/ծ գեներալ-մայոր Վրեժ Գաբրիելյանին (ծրագրի կառավարման խորհրդի համանախագահ), ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի խորհրդական Լիլիա Շուշանյանին և Հայաստանում ՄԱԶԾ մշտական ներկայացուցչի տեղակալ Դմիտրի Մարիյասին, որից հետո առաջարկել է հաստատել նիստի օրակարգը:

• Մաքրությունը սկսվում է աղտոտիչների վնասազերծումից

Սկիզբը էջ 1 /

Նիստի ժամանակ քննարկվել են 2016 թվականի կատարած աշխատանքները, ինչպես նաև ծրագրով նախատեսված Նուբարաշենի ԿՕԱ թափոնների գերեզմանոցի տեղանքի գնահատմանը և մաքրմանը, աշխատանքները նախագծող խորհրդատվական կազմակերպության ընտրությանը և աշխատանքների նախագծմանը, Հրազդանի վտանգավոր քիմիական թափոնների պահեստի վերակառուցման ինժեներական նախագծմանը, գործառնական պլանի մշակմանը, շահագործող մասնագետների կրթմանը վերաբերող հարցեր: Կառավարման խորհուրդը ծրագրի աշխատանքային խմբին առաջարկել է սեղմ ժամկետ-

ներում ներկայացնել ծրագրով 2017 թվականին նախատեսված աշխատանքների հստակ ժամանակացույցը:

Տեղեկանք

Կայուն օրգանական աղտոտիչներն ունեն թունավոր հատկություններ, կայուն են քայքայման հանդեպ, օժտված են կենսակուտակման հատկությամբ և համարվում են անդրսահմանային տարածման օբյեկտ, ինչպես նաև իրենց արտանետման աղբյուրից տարածվում են մեծ հեռավորության վրա օդի, ջրի և միգրացիոն տեսակների միջոցով՝ կուտակվելով ցամաքային և ջրային էկոհամակարգերում:

Աղբավայրերի կառավարման միջազգային փորձը եւ դրանց ներդրումը Հայաստանում



Ս/ք մարտի 31-ին Երևանի «Կոնգրես» հյուրանոցում տեղի է ունեցել «Առկա լավագույն տեխնոլոգիայի կամ բնապահպանական իմաստով լավագույն գործունեության մեթոդաբանության կիրառումը՝ բաց այրման աղբյուրներից կայուն օրգանական աղտոտիչների ոչ կանխամտածված արտանետումների նվազեցման համար» ծրագրի շրջանակներում՝ Ստոկհոլմի կոնվենցիայով կարգավորվող վտանգավոր թափոնների և քիմիական նյութերի նորմատիվա-իրավական հենքի վերլուծությանը և ամրապնդմանը ուղղված սեմինար: Ի կատարումն 2005 թ. Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի պարտավորությունների, կոնվենցիայի կողմ երկրները պետք է աջակցեն առկա լավագույն տեխնոլոգիայի կամ բնապահպանական իմաստով լավագույն գործունեության մեթոդաբանության կիրառմանը՝ բաց այրումը կանխարգելելու նպատակով: Սեմինարին մասնակցել են շահագրգիռ գե-

րատեսչությունների, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Ծրագիրն իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարության և ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) կողմից համատեղ՝ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ և նպատակաուղղված է բաց այրման աղբյուրներից դիօքսինների և ֆուրանների արտանետումների կրճատմանը: Միջազգային փորձագետ Սայմոն Պաուլսոն ներկայացրել է միջազգային փորձը և համապատասխան օրենսդրական հենքը՝ ուղղված թափոնների հեռացման, աղբավայրերի կառավարման կանոնակարգմանը, ինչպես նաև բաց այրման կանխարգելմանը և դիօքսինների ու ֆուրանների արտանետումների նվազեցմանը և կանխմանը: Ոլորտի մասնագետները ներկայացրել են իրենց մոտեցումները խնդրի վերաբերյալ, ծավալվել է շահագրգիռ քննարկում:

Հանքարդյունաբերության ոլորտում հանրության առջև հաշվետու լինելը օրվա հրամայականն է

«Մեդիա կենտրոնում» տեղի է ունեցել «Հանքարդյունաբերության հաշվետու և թափանցիկ կառավարման մարտահրավերներն ու խնդիրները» թեմայով քննարկում, որին մասնակցել են ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ, ԱճԹՆ Բազմաշահառու խմբի անդամ Խաչիկ Հակոբյանը, «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի կայուն զարգացման գծով ավագ մենեջեր Արմեն Ստեփանյանը և «Էկոլոգիական իրավունք» ՀԿ նախագահ Արթուր Գրիգորյանը: Տեղեկացնելով, որ 2017 թվականի մարտի 9-ին Կոլումբիայի մայրաքաղաք Բոգոտայում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության խորհուրդը հաստատել է Հայաստանի Հանրապետության ԱճԹՆ-ի թեկնածության հայտը և Հայաստանի Հանրապետությանը շնորհվել է ԱճԹՆ-ի թեկնածու երկրի կարգավիճակ, բնապահպանության նախարարի տեղակալը կարևորել է ոլորտի թափանցիկությունը՝ առաջին հերթին բնապահպանական չափանիշների պահպանման համատեքստում: Խ. Հակոբյանը նշել է, որ անդամակցությանը նախորդել է այդ ուղղությամբ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դ. Հարությունյանի համակարգմամբ իրականացված նախապատրաստական միջոցառումները, որից կարևորագույնը բազմաշահառու խորհրդի ձևավորումն էր: Խ. Հակոբյանը կարևորել է հանքարդյունաբերության ոլորտում հանրության առջև հաշվետվողականության բարձրացմանը խթանելու պահանջը և նկատել, որ «Մեդիա կենտրոնում» հանդիպման այս ձևաչափը, երբ մեկ սեղանի շուրջ են պետական մարմնի, հանքարդյունահանող ընկերության և հասարակական կազմակերպության ներկայացուցիչները, խնդիրների արդյունավետ լուծման հիմնական գրավականն է: Բազմաշահառու խմբի անդամ Արմեն



Ստեփանյանը նշել է, որ պատասխանատու հանքարդյունաբերող ընկերությունները միանշանակ շահագրգռված են ոլորտի թափանցիկության մեջ, ինչը նպաստում է նաև ընկերությունների միջև խաղի կանոնների հավասարեցմանը: «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչը շեշտել է, որ թափանցիկության սկզբունքով են առաջնորդվում նաև իրենք: Բազմաշահառու խմբի անդամ Արթուր Գրիգորյանը խոսել է ոլորտի խնդիրների լուծմանը նպաստող իրավական նորմերի և հասարակության մասնակցության մեխանիզմների կատարելագործման մասին: Հանդիպման մասնակիցները համակարծիք են եղել, որ կառավարության, արդյունահանող ընկերությունների և քաղաքացիական հասարակության փոխհամագործակցության համար ստեղծված հարթակը կնպաստի ոլորտի խնդիրների լուծմանը և կապահովի մեծ ծավալի տեղեկատվության հասանելիությունը շահագրգիռ կողմերի համար:

Պետական մեխանիզմը պետք է գործի իր ողջ հզորությամբ

Վարչապետ Կարեն Կարապետյանի մոտ օրերս կայացած խորհրդակցության ընթացքում քննարկվել են «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գործունեության արդյունավետությանը վերաբերող հարցեր:

ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը և «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն Վահե Գուլանյանը զեկուցել են «Սևան ազգային պարկի» գործունեության վերաբերյալ, ներկայացրել կառավարման, տնտեսական, բնապահպանական, քաղաքաշինական և հողօգտագործման տեսանկյունից գույքագրված խնդիրները:



Վարչապետ Կարապետյանը կարևորել է «Սևան ազգային պարկի» գործունեության արդյունավետության բարձրացումը և հանձնարարել առաջարկություններ ներկայացնել այն զարգացնելու, շահույթ հետապնդող կառույցի վերածելու վերաբերյալ: «Բոլոր անօրինակամությունների մատով շատ կոշտ պետք է կիրառել պետական մեխանիզմը: Բոլոր ավելորդ բաներից մաքրում, վերջացնում եք և կոնցեպցիա եք մշակում՝ ինչպես ենք այդ տարածքն աշխուժացնում ու փող աշխատում», - ասել է կառավարության ղեկավարը:

Օդերևութաբանական կանխատեսումները կարելու է բնապահպանական խնդիրների լուծման համար



ԶԶ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Յակոբյանը մասնակցել է Օդերևութաբանության համաշխարհային օրվա կապակցությամբ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում կազմակերպված միջազգայնացում: Ողջույնի խոսքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանը տոնի առթիվ շնորհավորել է «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի աշխատակիցներին և ոլորտի մասնագետներին: ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Սինասյանի և նախարարության աշխատակազմի անունից շնորհավորելով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակիցներին

Օդերևութաբանության համաշխարհային օրվա կապակցությամբ՝ նախարարի տեղակալ Խաչիկ Յակոբյանը մաղթել է նոր ձեռքբերումներ ուղորտում ծավալած գործունեության մեջ: «Ձեր աշխատանքն մեծ նշանակություն ունի մեր քաղաքացիների առողջության և անվտանգության, մեր երկրի բնապահպանական վիճակի բարելավման համար: Վստահաբար կարելի է ասել, որ չկա որևէ ոլորտ, որտեղ ձեր կանխատեսումների կարիքը չզգացվեր: Օդերևութաբանների տվյալները օգնում են կանխարգելել և վերացնել բնական անբարենպաստ երևույթները և դրանց հետևանքները», - նշել է ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալը: Խաչիկ Յակոբյանը կարևորել է երկու գերատեսչությունների առանձին ստորաբաժանումների, մասնավորապես՝ «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի և ՀՀ ԲՆ «Ձվարթնոց ավիաօդերևութաբանական կենտրոն» ՓԲԸ-ի երկարամյա արդյունավետ համագործակցությունը: ՀՀ ԱԻՆ հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության տնօրեն Լ. Վարդանյանը ներկայացրեց ոլորտի ձեռքբերումները: Ողջույնի խոսքով հանդես են եկել պետական, գիտական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և մասնագետներ:

Վանդակիզմ մայրաքաղաքում

Քիչ առաջ ավարտվեց երևանի քաղաքապետարանի աշխատանքային խորհրդակցությունը, որի ժամանակ երևանի քաղաքապետն անդրադարձավ հանգստյան օրերին Դավիթաշենում ապօրինի ծառահատման դեպքի առնչությամբ: «Դավիթաշենում տեղի ունեցածը որակում են, որպես վանդակիզմ: Ծառերի հատումը ուղղակի անթույլատրելի է և երբեք չի արդարացվելու մեր կողմից: Վերջիվերջո նման դեպքերում այլևս չպետք է սահմանափակվենք միայն վարչական տույժով. օրենքի շրջանակում ամենախիստ պատիժը պետք է սահմանվի այդ քաղաքացու նկատմամբ: Հանձնարարում են բնապահպանության վարչությունը, Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարին երևան քաղաքի ոստիկանության հետ համագորակցելով հայտնաբերել մեղավորներին և Նյութերը փոխանցել դատախազություն»: Ավելացնենք նաև, որ Ապրիլի 10-ին ոստիկանության Մաշտոցի բաժնում ահազանգ էր ստացվել, որ Աղաբաբյան փողոցում՝ «Դելֆին» լողավազանի դիմաց, 23 բար-



դի են հատել: Այս մասին հայտնում են ՀՀ ոստիկանությունից: Ձեռնարկված միջոցառումների և որոնողական աշխատանքների արդյունքում պարզվել է, որ արարքը կատարել է 1966 թ. ծնված Ա. Ս.-ն, որը ապրիլի 10-ին, ժամը 11.30-ին, Դավթաշենի 36/2 հասցեի մոտ հայտնաբերվել և բերման է ենթարկվել ոստիկանության Մաշտոցի բաժին: Պատճառված նյութական վնասի չափը պարզվում է: Նյութերն ուղարկվել են Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազություն: Խնդրով խիստ մտահոգված է նաև ՀՀ բնապահպանության նախարարության տեսչությունը, որն արդեն տեղում ուսումնասիրում է կատարվածի մանրամասները: «Բնություն» թերթի հաջորդ համարում մենք կներկայացնենք լրացուցիչ պարզաբանումներ:

«Արևիկ» ազգային պարկի մոտակայքի հրդեհը արագ մեկուսացվել է



Էլեկտրոնային մամուլում տեղեկատվություն էր տարածվել, ըստ որի ՀՀ Սյունիքի մարզի «Արևիկ» ազգային պարկի անտառային հատվածում հրդեհ է բռնկվել: ՀՀ բնապահպանության նախարարության «Ջանգեղուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը պարզաբանում է, որ «Արևիկ» ազգային պարկում հրդեհ չի արձանագրվել: 04.05.2017 թ. հրդեհ էր բռնկվել ազգային պարկին հարակից Մեղրի համայնքին պատկանող պտղատու

այգիների տարածքում, որը «Ջանգեղուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի աշխատակիցների և ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տարածքային ստորաբաժանման հրշեջների միջոցով հաջողվել էր մեկուսացնել և մարել: Հրդեհի օջախը մոտ է եղել «Արևիկ» ազգային պարկի սահմաններին, սակայն պարկի բուսական և կենդանական աշխարհը չի վնասվել:

ՀՀ բնապահպանության նախարարությունը պարզաբանում է



«Դիլիջան» ազգային պարկում ծառահատումների վերաբերյալ Facebook սոցիալական ցանցում տարածված տեղեկությունների վերաբերյալ ՀՀ բնապահպանության նախարարությունը հայտնում է, որ 2017 թվականի մարտի 27-ին «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի պահպանության բաժնի աշխատակիցների կողմից «Հաղարծին տեղամաս» մասնաճյուղում հայտնաբերվել է 12 տարբեր տեսակի և տրամագծի կտրված ծառ, որոնք գտնվում են տեղում: Կազմվել են համապատասխան անտառխախտման արձանագրություններ: Նույն տարածքում առկա են նաև նախկինում հաշվառված 12 կոճղ, որոնց վերաբերյալ արդեն իսկ կազմված

են եղել համապատասխան անտառխախտման արձանագրություններ, որոնք ուղարկվել են ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին: «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի պահպանության բաժնի աշխատակիցների կողմից ապօրինի ծառահատման դեպքերի հայտնաբերման աշխատանքները շարունակվում են:



Շրջակա միջավայրին հասցված վնասը կազմել է 1,8 մլն. դրամ

«» Բնապահպանական պետական տեսչության կողմից 27.03-31.03.2017 թթ. ժամանակահատվածում իրականացված շրջայցերի, ԲՊՏ վարույթին հանձնված գործերի քննության և հաշվետվությունների ընդունման գործընթացում հայտնաբերված խախտումների արդյունքում կայացվել է 350,0 հազ.դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 5 որոշում և հաշվարկվել 1816,33 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Մասնավորապես՝

Քուսական աշխարհի պահպանության ոլորտ

Կազմվել է վարչական տուգանքի 3 որոշում՝ 150,0 հազ.դրամ ընդհանուր գումարի և հաշվարկվել է 211,99 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին պատճառված վնաս, որից՝

Տավուշի տարածքային բաժնի վարույթին հանձնված գործերի քննության արդյունքում 2 ֆիզիկական անձի նկատմամբ ապօրինի հատված 3 ծառի համար կայացվել է 100,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 2 որոշում և հաշվարկվել է 181,99 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Շիրակի տարածքային բաժնի կողմից հայտնաբերված ապօրինի ծառահատման դեպքի համար կայացվել է 50,0 հազ. դրամի վարչական տուգանքի որոշում և հաշվարկվել 30,0 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս:

Փայտանյութի ապօրինի տեղափոխում՝

Կազմվել է վարչական տուգանքի 2 որոշում՝ 200,0 հազ. դրամի և հաշվարկվել 54,34 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին պատճառված վնաս, որից՝

Լոռու տարածքային բաժնի վարույթին հանձնված գործերի քննության արդյունքում ֆիզիկական անձի նկատմամբ հաշվարկվել է 15,06 հազ. դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Տավուշի տարածքային բաժնի վարույթին հանձնված գործերի քննության արդյունքում 2 ֆիզիկական անձի նկատմամբ կայացվել է 200,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի որոշում և հաշվարկվել է 39,28 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս:

Ապօրինի որսի իրականացման համար՝

Վայոց ձորի տարածքային բաժնի ՌՅ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Վայքի բաժնի աշխատակիցների հետ համատեղ անցկացված շրջայցերի արդյունքում արձանագրել է մեկ ձկնագողության դեպք: Չերհերի ջրամբարից որսացել են թվով 1000 հատ «կարաս» տեսակի ձուկ, 11 հատ «կարմրախայտ» տեսակի ձուկ և 327 հատ խեցգետին, բնությանը պատճառված վնասի հատուցման չափը կազմել է 1մլն 55 հազար դրամ: Գործը գտնվում է մարզային քննչական բաժնում: Վարչարարության և փորձաքննության վերահսկողության բաժինը դատական ակտերի հարկադիր կատարման է ներկայացրել 6 վարչական տուգանքի որոշում՝ 600,0 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով և 6 վնասի փոխհատուցման որոշում՝ 368,750 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով:

Ընդհանուր առմամբ ՌՅ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության կիրառած պատժամիջոցներից հաշվետու ժամանակահատվածում ՌՅ պետական բյուջե է մուտքագրվել 0,85 մլն. դրամ գումար:

Բնության հատուկ պահպանվող տարածքներին օգնության կհասնեն անօդաչու սարքերը

Թ Բիլիսի քաղաքում տեղի է ունեցել Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կազմակերպած անօդաչու սարքերի շահագործման ուսուցողական դասընթացը: Դասընթացին մասնակցել են ՌՅ բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալության էկոտուրիզմի զարգացման և բնության հատուկ պահպանվող տարածքների և դենդրոպարկերի կառավարման բաժնի մասնագետները, «Անտառ-մոնիթորինգ» կազմակերպության և Ամերիկյան համալսարանի «Հակոբյան բնապահպանական կենտրոն»-ի մասնագետները, ինչպես նաև Վրաստանի շրջակա միջավայրի պահպանությամբ զբաղվող լորտային մասնագետներ: Դասընթացավարները հրավիրվել էին Շվեյցարիայից և ներկայացնում էին տեղի արտադրության EBEE մակնիշի անօդաչու սարքի հնարավորությունները: Քննարկվել



են անօդաչու սարքերի առանձնահատկությունները, անօդաչու սարքերի շահագործման եղանակներն ու վերծանման հնարավորությունները: Չեռք բերված գիտելիքները փորձնականորեն կիրառվել են Թբիլիսիից ոչ հեռու ընկած տարածքում՝ դաշտային պայմաններում:

Առաջիկայում անօդաչու սարքերը կկիրառվեն նաև Հայաստանի Հանրապետությունում: Դրանց միջոցով հնարավոր կլինի իրականացնելու կենսաբազմազանության մոնիթորինգ, մշտադիտարկման և այլ հետազոտական աշխատանքներ՝ ինչն առավել արդյունավետ կդարձնի բնության պահպանության նկատմամբ վերահսկողությունը:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի «Խոր Վիրապ» պետական արգելավայրում բռնկված հրդեհը մարվել է

Մարտի 21-ին «Խոր Վիրապ» պետական արգելավայրում հրդեհ է բռնկվել: Հրդեհի պատճառը եղել է արգելավայրի հարակից համայնքի խոտածածկ տարածքում բռնկված հրդեհը: Քամու ուժգնության հետևանքով հրդեհը ներթափանցել է արգելավայր: Արգելավայրի մոտ 50 հա եղեգնապատ տարածքում կղզյակների տեսքով այրվել են չոր եղեգները:

«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի աշխատակիցները դիմել են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության տարածքային ստորաբաժանման հրշեջ-փրկարարներին, սակայն մինչ նրանց գալը արգելոցի աշխատակիցներին հաջողվել է հանգցնել հրդեհի օջախները:

Արգելավայրի ֆլորային և ֆաունային էական վնաս չի պատճառվել:



Հիդրոմետի կանխատեսումներով Սևանա լճի մակարդակը ամռանը կհասնի 1901 մ նիշի

Կանխատեսվում է, որ 2017 թ.-ի հուլիսի 1-ի դրությամբ Սևանա լճի մակարդակը կհասնի մինչև 1901 մ նիշի՝ բարձրանալով 42-47 սմ-ով:

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Հիդրոմետ ծառայության այս կանխատեսման համար հիմք են ծառայել լճի մակերեսույթից գոլորշացման մեծություները, եղանակի և Սևանա լիճ մուտք գործող գետային հոսքի կանխատեսումները, Արփա-Սևանա ջրատարով 130 մլն. խոր. մ ջուր Սևանա լիճ տեղափոխումը, ոռոգման նպատակով լճից 170 մլն. խոր. մ ջրառը: 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ լճի մակարդակը կգտնվի 1900,71-1900,76 մ սահմաններում, որը 2017 թ. հունվարի 1-ի համեմատ բարձր կլինի +25...+30 սմ-ով: Սևանա լճի էկոհամակարգի կայունացման համար հաշվարկվել է լճի մակարդակը բարձրացնել մինչև 1905 մ՝ հաշվի առնելով ալիքի բարձրությունը:

2040 թ.-ին 600 միլիոն երեխա կապրի ջրի սուր դեֆիցիտի պայմաններում

Աշխարհում միլիոնավոր երեխաներ արդեն զրկված են անվտանգ խմելու ջրի հասանելիությունից: Իսկ 2040 թ.-ին մոտ 600 միլիոն երեխա՝ յուրաքանչյուր չորրորդ երեխան, կապրի ջրի սուր դեֆիցիտ ունեցող շրջաններում: Այս մասին զգուշացնում է ՅՈՒՆԵՍԿՅ-

Էկոլոգ



ը: ՄԱԿ-ի պաշտոնական կայքի համաձայն՝ ներկայումս աշխարհի 36 երկիր քաղցրահամ ջրի սուր պակաս է զգում: «Չունենալով մաքուր ջրի հասանելիություն՝ երեխաները, ամենայն հավանականությամբ, մանկահասակ տարիքում կմահանան ջրային բակտերիաներով պայմանավորված հիվանդություններից: Առանց մաքուր ջրի երեխաները չեն կարող գոյատևել», - հայտարարել է ՅՈՒՆԵՍԿՅ-ի գործադիր տնօրեն Էնթոնի Լեյքը: ՅՈՒՆԵՍԿՅ-ում նշում են, որ համաշխարհային օվկիանոսի տաքացումը և նրա մակարդակի բարձրացումը, հաճախակի դարձած ջրիեղեղներն ու անապատացումը, ինչպես նաև սառույցների հալչելը բացասական են ազդում ջրի որակի և ջրամատակարարման համակարգերի վրա: Մարդու համար այդ երևույթներն ավելի վտանգավոր են դառնում բնակչության արագ աճի ֆոնին, նաև ուրբանիզացիայի ու ինդուստրիալիզացիայի գործընթացների, որոնք բերում են ջրային ռեսուրսների սպառման: Իրավիճակն ավելի են սրում հակամարտություններն աշխարհի տարբեր մասերում:

Ճանաչենք թռչունների կենսակերպը

Մարտի 30-ին ՀՀ բնապահպանության նախարարության Հայաստանի բնության պետական թանգարանում թռչունների միջազգային օրվա կապակցությամբ տեղի է ունեցել «Սեր հայրենի բնության հանդեպ» խորագրով միջոցառումը:

Միջոցառմանը հրավիրված էին գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչներ, փորձագետներ: «Թռչունների պահպանման միություն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչները՝ Սամիկոն Ղասաբյանի գլխավորությամբ ներկայացրել են Հայաստանի էնդեմիկ թռչնատեսակների մասին տեղեկություններ և կարևորել նրանց բնադրավայրերի պահպանությունը:

«Թռչունների պահպանման միություն» հասարակական կազմակերպության կրթության գծով համակարգող Մարիաննա Դանիելյանը ներկաների համար անց է կացրել բաց դաս՝ «Հայաստանի թռչունների կենսակերպը» խորագրով:



Միջոցառմանը մասնակցել են ՀՀ Արմավիրի մարզի Արարատ քաղաքի թիվ 3 հիմնական դպրոցի աշակերտները, ովքեր ներկայացրել են Հայաստանում բնակվող թռչունների կենսակերպն ու առանձնահատկությունները: Դպրոցի աշակերտները հանդես են եկել նաև իրենց հեղինակած ստեղծագործական ներկայացումներով:

Էկոլոգ

«Էյ Թի Փի»-ն 64,107 ծառ է տնկել Տաշիրում եւ Ստեփանավանում

«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամն այս տարի 64,107 ծառ է տնկել Տաշիրում և Ստեփանավանում: Հիմնական ծառատունկը իրականացվել է Տաշիրում: Համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա՝ Միխայլովկա գյուղի հարևանությամբ, տնկվել է 59,816 ծառ: «Դրանք հիմնականում սոճու և քիչ քանակության վայրի պտղատու ծառերի՝ խնձորենու և տանձենու տնկիներ են: Այդ տարածքը կազմում է մոտ 34 հեկտար: Աշխատանքները դեռ շարունակվում են: Նախատեսվում ենք ավարտել դրանք այս տարվա աշնանը», - «Էկոլոգ»-ին փոխանցեց «Էյ Թի Փի»-ի անտառագետ Վահե Մարտիրոսյանը: Նա նշեց, որ ծառատունկին մասնակցել են նաև հարակից համայնքների բնակիչները:



Նախագիծը՝ Արծրուն Պեղանյանի
խմբագիր՝ Սանվել Սկրչյան
Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի
Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝
011 818 517